

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի N2168-Ն որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2018 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի
սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ
**հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական
ռետուրների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու
մասին**» N 2168-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ
փոփոխություններն ու լրացումները.

- հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ և 4.2-րդ
կետերով՝

«4.1. Սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված՝ ծառերը, ներառյալ
փայտանյութը, եթե գտնվում են՝

- անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող
տարածքում, ապա Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի համապատասխան արձանագրությամբ ի պահ են
հանձնվում այդ տարածքի կառավարումն իրականացնող
կազմակերպությանը,
- անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքից
դուրս, ապա Հայաստանի Հանրապետության բնապահպանության
նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի

համապատասխան արձանագրությամբ ի պահ են հանձնվում մոտակա անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարումն իրականացնող կազմակերպությանը:

4.2. Համապատասխան վարչական վարույթը կամ քրեական գործն ավարտվելուց հետո առգրավված ապօրինի ձեռք բերված ծառերը, ներառյալ փայտանյութն, օրենսդրությամբ սահմանված կարգով իրացվում է այն կազմակերպության կողմից, որին դրանք ի պահ էին հանձնվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:»,

- հավելվածի 5-րդ կետի՝

ա. 1-ին պարբերության «սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված ծառերը, ներառյալ փայտանյութը և» բառերը հանել,

բ. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից աճուրդային կարգով օգտակար հանածոների իրացումը՝ օգտակար հանածոները համապատասխան արձանագրությամբ պահվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման տարածքում կամ դրան փոխարինող շինությունում:»,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթները տարածվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը կազմակերպություններին ի պահ հանձնված առգրավված ապօրինի ձեռք բերված ծառերի, ներառյալ փայտանյութի վրա:

